

Հարգելի գործընկեր,

Գնումների մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն, խնդրում եմ հստակեցնել և/կամ խմբագրել ՀՀ ԳՄ ԳՀԱՊԶԲ-35/22 ծածկագրով գնանշման հարցման հրավերի ստորև նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված հետևյալ պահանջները.

Չ/Փ 5 -ում նշվա մի շարք լեզուների **միաժամանակյա** առկայության պահանջն անհասկանալի է, քանի որ գործնականում կիրառելի լեզուներն են ռուսերենը և անգլերենը: Մնացած լեզուների ՄԻԱԺԱՄԱՆԱԿՅԱ առկայությունը կիրառելի չէ գործնականում, որևէ կերպ չի ազդում սարքի աշխատանքի և/կամ բուժանձնակազմի աշխատանքի հեշտացման վրա: Հետևաբար նշյալ պահանջը գործնականում կիրառել չ, ուստի խնդրում ենք -մբագրել, նշելով այն լեզուները, որոնց **առկայությունը խելամիտ է** և դրանք փաստացի օգտագործվելու են բուժանձնակազմի կողմից : Չ/Փ 6 և 24-ում նշված են ճիշտ բնութագրեր, բայց մի շարք չափաբաժիններում կան խնդիրներ, մասնավորապես,

Չ/Փ 11 - նշված է Zerone Co կամ համարժեք, Zerone Co-ն արտադրող է, անհրաժեշտ է նշել գոնե մոդել, բայց անգամ այդ դեպքում անհրաժեշտ է հստակեցնել ինչ սկզբունքով է գնահատվում կոնկրետ մոդելի պարամետրերի համարժեքությունը:

Չ/Փ 15 և 16 - չափաբաժինների մասով բնութագրերը հակասում են օրենքին, չափաբաժինների կրճատման նպատակով խմբավորված են այնպիսի սարքավորումներ, որոնք կարող են աշխատել առանձին, մասնավորապես,

Չ/Փ 15 - ռեզեկտոսկոպ, քարերի հեռացման զամբյուղ, հիստերոսկոպ

Չ/Փ 16 - ռեզեկտոսկոպ, կիսաճկուն ՈւՌՍ, պնևմոմեխանիկական լիթոտրիպտեր:

Նշված սարքավորումները առանձին միավորներ են:

Չ/Փ 17 - անվանման մեջ նշված է գործիքներ, սակայն բնութագրում նկարագրված է էլեկտրոլիզավորման համակարգ ինչպես նաև գործիքներ:

Չ/Փ 18 - մոնոպոլյար և բիպոլյար ռեժիմները նշված են հստակ, կոնկրետ արտադրողի ռեժիմներ են, իսկ արգենի մոդուլը առհասարակ նկարագրված չէ:

Շնորհակալություն